

**ՀՀ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԴԱԾԸ**

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՍԱՄՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ազգանուշական պահանջման մասին օրենքը՝ ՀՀ Ազգային օրենսդրությունը, 2006 թվականի հունվարի 1-ին օրուն մեջ մերժությամբ առաջիկ առաջարկությունը հաջողակա է հաստիքացնելու համար:

**ՀՀ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ և այն
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱԾԸ**

Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձընթացը /ԾՍՎԳ/ կարգավորվում է «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, /այսուհետ օրենք/, որը ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1995թ. նոյեմբերի 20-ին և օրենքից բխող հետևյալ ենթաօրենսդրական ակտերով.

- թիվ 386 20.12.96թ. «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին»,
- թիվ 193 30.03.99թ. «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին»,
- թիվ 701-Ն 18.06.2003թ. «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը վերանայելու և չեղյալ հայտարարելու կարգը»,

Թե օրենքը, և թե ենթաօրենսդրական ակտերը ուղղակիորեն վերաբերում և կարգավորում են Պետական բնապահպանական փորձաքննության գործընթացը, իսկ անուղղակիորեն՝ ԾՍՎԳ և ՌԷԳ գործընթացները:

Հայաստանի հանրապետությունում էկոլոգիական գնահատման իրականացման համար օրենսդրական հիմք են հանդիսանում նաև.

- «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անդրահմանային կոնվենցիան» 1997թ. վավերացված:
- «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անդրահմանային կոնվենցիան» - ից բխող « Ռազմավարական էկոլոգիական գնահատման » արձանագրությունը, ստորագրված է 2003թ:

Օրենսդրության ընդունման և կիրառման արդյունքում փորձաքննության գործընթացում, իսկ անուղղակիորեն նաև ԾՍՎԳ գործընթացում տեղի ունեցան գործընթացների կանոնակարգմանը և հրապարակայնացմանը նպաստող դրական տեղաշարժեր:

Օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության, և հայեցակարգի փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Այն սահմանում է, որ փորձաքննության ենթակա են կառուցման, վերակառուցման, ընդլայնման, տեխնիկական վերագինման, լուծարմանը վերաբերող նախատեսվող գործունեությունների նախագծային փաստաթղթերը և հայեցակարգերը (հայեցակարգեր, ծրագրեր, համալիր սխեմաներ, գլխավոր հատակագծեր, տարածքային պլանավորման փաստաթղթեր և պաշարների համալիր օգտագործման սխեմաներ):

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից իրականացվող պարտադիր գործունեություն է, որի նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցել հայեցակարգի և նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն գարգացման վրա:

Պետական բնապահպանական փորձաքննության խնդիրներն են.

- նախատեսվող գործունեության, հայեցակարգի շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատումը,

- ազդեցության հետևանքների վերլուծման ամբողջականության և ստույգության ստուգումը, դրանց կանխարգելման, վերացման կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների բավարարության ստուգումը, թե շինարարության, շահագործման և իրականացման գործընթացում, թե արտակարգ և վրարային իրավիճակների դեպքում,
- բնական պաշարների արդյունավետ և բանական օգտագործման ապահովումը,
- փորձաքննության գործընթացում հասարակության ներգրավման և մասնակցության ապահովումը:

Օրենքում ներկայացված և բվարկված են շրջակա միջավայրի վրա փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունները: Օրենքում բվարկված նախատեսվող գործունեությունների համար սահմանված են սահմանային չափեր, որից ցածր լինելու դեպքում տվյալ գործունեությունը ենթակա չէ փորձաքննության: Թերություն ենք համարում, որ Օրենքում ընդունված են ոչ իրատեսական սահմանային չափեր, որի պատճառով Հայաստանում իրականացվող փոքր և միջին գործունեության տեսակները դուրս են մնում Օրենքով սահմանված փորձաքննության ենթակա գործունեության շրջանակներից, իսկ արդյունքում Հայաստանի զգայուն և խոցելի էկոհամակարգը կարող է զգալի ազդեցություններ կրել: Որպես Օրենքի թերություն կարելի է նշել նաև այն, որ նախատեսվող բոլոր գործունեությունների համար անկախ դրանց ազդեցության չափից և ծավալից փորձաքննության իրականացումը նախատեսված է նույն ընթացակարգով, իսկ որոշ գործունեություններ ընդհանրապես դուրս են մնացել փորձաքննության ենթակա գործունեությունների ցանկից:

Նշված թերությունները մեղմում է այն, որ անկախ սահմանային չափից փորձաքննության ենթակա են նաև այն նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվում են հատուկ կարգվիճակ ունեցող տարածքներում, ինչպես նաև սահմանված են մի շարք նախաձեռնություններ, որոնց դեպքում փորձաքննության ենթակա են նաև սահմանային չափերը չգերազանցող նախատեսվող գործունեությունները:

Փորձաքննության շրջանակները ներառում են շրջակա միջավայրի բաղադրիչների՝ կլիմայական պայմանների, բուսական և կենդանական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտի, օդի, ջրի, ընդերքի, հողի, բնական պաշարների, պատմամշակութային հուշարձանների, բնակչության առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց փոխհարաբերությունն ու փոխկապակցությունը:

Փորձաքննության շրջանակները ներառում են նաև.

- նախատեսվող գործունեության այլընտրանքային լուծումները (այդ թվում գրոյական), դրանց համեմատական վերլուծությունը և նախընտրելի տարրերակի հիմնավորումները,
- շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության վերացման կամ նվազեցմանն ուղղված միջոցառումները, դրանց արդյունավետությունն ու բավարարությունը,

Փորձաքննության ընթացքում հաշվի են առնվում նաև տարածքի սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և պատմամշակութային առանձնահատկությունները:

Նախատեսվող գործունեության փորձաքննության ընթացքում նախ փորձաքննության է ենթարկվում նախատեսվող գործունեության ծանուցումը՝ սահմանված նյութերով, այնուհետև նախագծային փաստաթղթերի ամբողջական փաթեթը: Օրենքի հակասություններից և թերություններից է ծանուցման փուլին վերաբերող հոդվածի անավարտությունը, այսինքն պարզ չի, թե ծանուցման փուլի փորձաքննությունն ինչով է ավարտվում: Ծանուցման փուլի փորձաքննության ավարտից հետո իրականացվում է նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերի փորձաքննություն, սակայն դեռևս սահմանված չէ այս փուլի փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանցում պարունակող տվյալների ցանկը ու ծավալը՝ ինչը իրավմամբ կհամապատասխաներ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջներին: Օրենքից բխող այս ենթաօրենսդրական ակտի բացակայությունը կարելի է համարել այս ոլորտի օրենսդրության լուրջ բացընդումներից, ինչը բավականին դժվարացնում է, թե շրջակա

միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացնող մասնագետների, թե այդ գնահատման փորձաքննություն իրականացնող մարմնի, տվյալ դեպքում՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատանքը:

Փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանցում պարունակող տվյալների ցանկի ու ծավալի անորոշակիությունը, ինչպես նաև ծանուցման փուլի անավարտությունը նպաստում է նրան, որ գործնականում հաճախակի այս երկու փուլերը համընկնում են և փորձաքննության ներկայացված ՇՍՍԳ հաշվետվությունը կամ համապատասխան փաստաթղթերը լինում են ոչ ճիշտ և թերի, ինչ պատճառով առաջանում է լրամշակման անհրաժեշտություն:

Փաստաթղթերի անձտությունների և ոչ լրակազմ լինելու դեպքում օրենքը լրամշակման փուլ չի նախատեսում, և գործնականում շատ նախատեսվող գործունեությունների փաստաթղթերի՝ անձտությունների և լրակազմ չլինելու պատճառով (ձեռնարկողին ներկայացված բազմաթիվ գրավոր պահանջների արդյունքում) փորձաքննական գործընթացը ուղղակի հնարավոր չի լինում ավարտել:

Լիազորված մարմինը փորձաքննության գործընթացում՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, ներգրավվում է «Մասնագիտական իրավասության հավաստագրեր տվող և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունների հաստատող հանձնաժողովի» (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից հավաստագրված լիազորված անձանց (արտաքին, անկախ փորձագետ), որոնց կողմից ուսումնասիրվում, ստուգվում, փորձաքննության են ներարկվում.

- փաստաթղթերի լիարժեքությունը,
- շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության բոլոր դրական և բացասական ազդեցությունների ամբողջականությունը, ինչպես նաև դրանց փոխներգործությունը,
- կիրառված գնահատման մեթոդները և տեղեկատվության ամբողջականությունը,
- շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության վերացման կամ նվազեցման նպատակով առաջարկված տեխնիկական լուծումների համապատասխանությունը ժամանակակից գիտական և տեխնիկական մակարդակին,
- նախատեսված գործունեության այլընտրանքային լուծումները, նախընտրած տարրերակի հիմնավորումը,
- շրջակա միջավայրի վրա նախատեսված գործունեության վնասակար ազդեցության բացառման կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների բավարարությունը, լիարժեքությունը,
- հասարակության, ազդակիր համայնքի և պետական շահագրգիռ մարմինների կարծիքները

Մասնագիտական եզրակացությունն պարունակում է առաջարկություն դրական կամ բացասական փորձաքննական եզրակացության վերաբերյալ:

Փորձաքննության գործընթացի բափանցիկությունը բարձրացնելու և հասարակայնության մասնակցությունը ապահովելու նպատակով Օրենքը ամրագրում է երեք փուլով հասարակական լսումների իրականացում՝ լիազորված մարմնի, համայնքի դեկավարների և ձեռնարկողի կազմակերպմանը: Հասարակական լսումները իրականացվում է նախ ծանուցման փուլում, այնուհետև փաստաթղթերի փաթեթի փորձաքննության փուլում, իսկ վերջում իրականացվում է գործունեության վերաբերյալ լսումները: Օրենսդրության թերությունն է այն, որ ՀՀ կառավարության կողմից դեռևս սահմանված չէ հասարակական լսումների արարողակարգը:

Լիազորված մարմինը ապահովվում է նաև պետական շահագրգիռ մարմինների և հասարակայնության կարծիքների ստացումը: Հասարակական քննարկումների արձանագրությունների, մասնագիտական եզրակացության, և լիազորված մարմնի կողմից իրականացված փորձաքննության հիման վրա կազմակերպությունը նախապատրաստում է փորձաքննական եզրակացության նախագիծը, որը ներկայացվում է Հանձնաժողովի

քննարկմանը, իսկ այնուհետ՝ նախարարի հաստատմանը: Փորձաքննական եզրակացությունը լինում է դրական կամ բացասական:

Քննապահպանության նախարարությունը կարող է վերանայել կամ չեղյալ համարել փորձաքննության եզրակացությունը, եթե ընդունվել է նոր բնապահպանական օրենսդրություն կամ ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ (Վերանայելու կամ չեղյալ համարելու արարողակարգը սահմանված է ՀՀ Կառավարության կողմից):

Գործունեության իրականացման ընթացքում եթե խախտվում են եզրակացությունում նշված փորձաքննական պահանջները նախարարությունը պարտավոր է մասամբ կամ ամբողջությամբ փակել, կասեցնել կամ արգելել նախատեսվող գործունեության իրականացումը մինչև համապատասխան պահանջների կատարումը:

Եթե նախատեսվող գործունեությունը ունի անդրսահմանային ազդեցություն, ապա փորձաքննությունն իրականացվում է՝ ելնելով Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներից: Այս դեպքում եզրակացությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում չի եղել անդրսահմանային ազդեցություն ունեցող գործունեություններ և հայեցակարգեր և նման փորձաքննություն դեռևս չի իրականացվել:

Ուազմավարական գնահատում պահանջող հայեցակարգի փորձաքննությունը որոշակիորեն տարբերվում է նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերի փորձաքննությունից: Հայեցակարգ ներկայացնողը պարտավոր է հայեցակարգի մշակման ընթացքում իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար հետազոտությունների համապատասխան ծավալ, ինչը դեռևս չի սահմանված:

Հայեցակարգերի վերաբերյալ հասարակական լուսմները կազմակերպում է հայեցակարգը ներկայացնողը և հասարակական կարծիքը հաշվի է առնում մինչև փորձաքննության ներկայացնելը: Օրենքում հայեցակարգի փորձաքննության գործընթացում զարմանալիորեն չի նախատեսված լիազորված անձի (անձանց) ներգրավվում՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Օրենքում ներկայացված փորձաքննության ենթակա հայեցակարգերի ոլորտների թվարկումից դուրս են մնացել կոնվենցիայում ամրագրված մի քանի ոլորտներ: Հայեցակարգի փորձաքննության գործընթացում չի ամրագրված նաև նախնական փորձաքննության՝ ծանուցման փուլը, այսինքն փորձաքննության են ներկայացվում արդեն ավարտուն ծրագրային փաստաթղթերը՝ որոնք հաճախ չեն պարունակում ՈՒՂ, ինչը առավել աշխատատար է դարձնում փորձաքննության գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում փորձաքննության իրականացումը պարտադիր է, և արգելվում է փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության և հայեցակարգի իրականացում առանց դրական փորձաքննական եզրակացության:

Չնայած օրենքը լիարժեք չի ապահովում շրջակա միջավայրի վրա ազդեցության, այդ թվում անդրսահմանային ներգործությունների դեպքում փորձաքննության իրականացման, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և Ուազմավարական բնապահպանական գնահատման իրավական ու տնտեսական հիմքերը և գործող մեխանիզմները, այնուամենայնիվ օրենսդրության ընդունումը և կիրարկումը արդեն իսկ լուրջ ձեռքբերում է ՀՀ բնապահպանության ոլորտում:

Պետք է նշել, որ ՀՀ նախատեսվող գործունեության և հայեցակարգերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացնում և համապատասխան փաստաթղթերը կազմում են տարբեր կազմակերպություններ և անհատներ, իսկ դրանց փորձաքննության իրականացումը Հայաստանում պետական մենաշնորհ է, ինչը իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

Փորձը ցույց է տալիս, որ հանրապետությունում բազմաթիվ նախատեսվող գործունեություններ իրականացվում են առանց բնապահպանական փորձաքննության եզրակացության, այսինքն խախտում է Օրենքը և շատ դեպքերում, շնորհիվ ՀՀ բնապահպանության նախարարության վերահսկողական ծառայության փորձաքննության են ներկայացվում արդեն շինարարական աշխատանքներն սկսած կամ, նույնիսկ, արդեն գործող օբյեկտների նախագծային փաստաթղթերը: Որոշ դեպքերում այդպիսի օբյեկտների հարցով հարուցվել են դատական գործեր: Այս հարցի կարգավորումն ավելի

շատ կապված է օրենքի խախտման համար պատասխանատվություններ նախատեսող օրենսդրության խստացման և կիրառման հետ:

Օրենքի ընդունումից հետո փորձաքննության են ենթարկվել մոտ 1000 նախատեսվող գործունեության և հայեցակարգերի նախագծային փաստաթորթեր:

Դրանցից բացասական եզրակացություն են տրվել միայն 9-ին մոտ 700 նախագծային փաստաթորթեր փորձաքննության արդյունքում վերադարձվել են լրամշակման, որից հետո միայն ստացել են դրական եզրակացություն:

2005 թ-ին փորձաքննության է ներկայացվել 161 նախատեսվող գործունեության և հայեցակարգերի նախագծային փաստաթորթեր, որոնցից միայն մեկն է ստացել բացասական եզրակացություն, իսկ 26-ը գտնվում են լրամշակման փուլում:

Եթե Օրենքի ընդունման առաջին տարիներին փորձաքննության են ներկայացվել, օրինակ 1998թ՝ 69 նախագծային փաստաթորթեր, 1999թ՝ 139, ապա 2004 թ-ին այդ թիվը արդեն հասել է 180: Այս տարի ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Եվլոպայի և ԱՊՀ երկրների՝ Քրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնի և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կողմից իրականացվեց Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ՌԷԳ-ի փորձական ծրագիրը՝ որպես Հայաստանում ՌԷԳ արձանագրության իրականացման համար հզորությունների ստեղծման գործիք: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ աստիճանաբար թե միջազգային կոնվենցիաները, և թե Օրենքը ավելի մեծ կիրարկում են ստանում և էկոլոգիական հարցերին ավելի մեծ ուշադրություն է դարձվում:

Չնայած վերը նշված բազմաթիվ թերությունների և հակասությունների անհրաժեշտ են համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ Օրենսդրության ընդունումը և կիրարկումը, անդամակցությունը միջազգային կոնվենցիաներին, գործընթացի հրապարակայնությունը, արդեն իսկ դրական տեղաշարժ է ոլորտի զարգացման համար, և այսօր արդեն բնապահպանական փորձաքննությունը իր մեծ ներդրումն ունի հանրապետության բնապահպանական ոլորտում:

Ոլորտի կանոնակարգմանն ուղղված անհրաժեշտ է իրականացնել.

- բնապահպանական փորձաքննության, ՇՍՍԳ, ՌԷԳ վերաբերող օրենսդրության կատարելազործում և արդիականացում,
- ոլորտին վերաբերող ուղեցույցների, ձեռնարկների, նորմատիվների մշակում,
- օրենսդրության կիրարկումն ապահովող մեխանիզմների մշակում,
- կաղրերի վերապատրաստում, կաղրային բազայի ստեղծում:

Ամփոփելով ասեմ, որ պետության, հասարակայնության աջակցության և համապատասխան ներդրումների առկայության դեպքում հնարավոր կիմի կատարելազործել ՇՍՍԳ, ՌԷԳ և բնապահպանական փորձաքննություն գործընթացները, ինչն էլ իր հերթին կնպաստի շրջակա միջավայրի առողջացման ու պահպանմանը:

Հանրության մասնակցություն

Հանրության մասնակցությունը գործընթաց է, որի շնորհիվ, կոնկրետ խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելիս, հաշվի են առնվում առանձին մարդկանց, բնակչության խմբերի հայացքները, դիրքորոշումը, կարծիքները:

Հանրության մասնակցությունը ժողովրդավարական սկզբունք է, որին հետևելը հնարավորություն է տալիս մարդկանց մասնակցել իրենց կյանքի վրա ներգործող իմանախնդիրների լուծմանը, ինչպես նաև՝ հանրային աջակցություն ապահովել որոշումների նախապատրաստման, հետևաբար նաև՝ դրանց իրագործման ժամանակ /օրինակ՝ սոցիալ-տնտեսական զարգացման մասին/:

Հանրության մասնակցության միջոցով քաղաքացիները հնարավորություն են ստանում ներգործել էկոլոգիական կարևորություն ունեցող որոշումների ընդունման վրա, ստանալով տեղեկատվություն այն խնդիրների մասին, որոնք կարող են ազդել նրանց առողջության, կենսամակարդակի վրա: Դրանով հանրության մասնակցությունը մարդկանց մոտ դաստիարակում է սոցիալական պատասխանատվության զգացում, որի

շնորհիվ ընդունված որոշումները համապատասխանում են տեղական պայմանների յուրահատկությանը:

Հանրության մասնակցությունն օգտակար է նաև որոշումներ ընդունող անձանց համար /նախաձեռնող, գործարար, պետ. կառույցներ, որոնք մշակում են զանազան ժրագրեր, փաստաթղթեր.../:

Հանրության մասնակցությունը արդյունավետ է նաև պետական կառույցների համար, քանի որ նրանք հնարավորություն են ունենալում իրենց աշխատանքի ընթացքում հաշվի առնել զանազան կազմակերպությունների /մասնագիտական, իրավական, գիտական, տնտեսագիտական/ և մասնավոր անձանց կարծիքը, ուսումնասիրել նրանց տրամադրած տեղեկատվությունը:

Հանրությի ներգրավումը նախագծերի նախապատրաստման, մասնագիտական քննարկումների և իրագործման ժամանակ, նպաստում է հավատի, հեղինակության աճին պետական կառույցների նկատմամբ /որը Հայաստանում գրեթե չկա, էկոլոգիական նշանակություն ունեցող պետական կառույցների դիրքերի ամրապնդմանը /որը Հայաստանում շատ խախտութ է/: Նախկին ԽՍՀՄ երկրներում պետական քաղաքականության առաջնահերթությունները մնում են տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրները, այդ պատճառով էկոլոգիական գերատեսչությունների կարծիքները հաճախ անտեսվում են:

Էկոլոգիական կարևորություն ունեցող որոշումների ընդունման գործընթացում կա նաև երրորդ կողմը՝ **նախաձեռնող-գործարար**: Այսօր Հայաստանում գործարար շրջանները դեռևս լավ չեն պատկերացնում հանրության մասնակցության, հանրային լայն և ընդգրկուն խորհրդատվության անհրաժեշտությունը, հատկապես նախագծերի նախապատրաստման ժամանակ: Այնուամենայնիվ շուկայական հարաբերությունների կանոնավորման հետ զուգահեռ գործարարները հաշվի կառնեն նաև հանրային կարծիքը: Չե՞ որ շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում տնտեսապես ավելի ձեռնտու և հեշտ է կանխել վնասաբեր գործողությունը, քան` վերացնել դրա հետևանքները:

Այսօրվա պայմաններում պետական էկոլոգիական /քնապահպանական/ կառույցների և հանրային կազմակերպությունների խնդիրն է նաև՝ օգնել գործարարներին գիտակցելու հանրության մասնակցության օգտակարությունը /այնպես որ, ՀԿ-ներին և պետ. կառույցներին այսօր շուկայական պայմանները պարտադրում են համագործակցել:

Հանրության մասնակցությունը գործարարներին հնարավորություն կտա՝

- համապարփակ տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի վրա այս կամ այն նախագծի ազդեցության մասին,
- արդյունավետորեն հաշվի առնել տեղական պայմանների յուրահատկությունը և որոշել նախագծի հնարավոր թերությունները,
- հաշվի առնել տեղական քնակչության կարծիքը նախագծի լրացուցիչ կատարելագործման համար,
- լավացնել հարաբերությունները ինչպես պետական, այնպես էլ հանրային կառույցների հետ, օգտագործել ՀԿ-ներում առկա մասնագիտական փորձը, գիտական ներդրումների շնորհիվ լրացուցիչ շահույթ ստանալ,
- նվազեցնել քախումների հավանականությունը կամ անցանկալի գործողությունները պետության կողմից /լրացուցիչ հարկ, բարձր տուգանքներ, գործունեության դադարեցում, բնությանը հասցրած վնասի հատուցում/,
- հուսալի հարաբերություններ սահմանել տեղական դեկավարների և հանրության, մասսայական լրատվամիջոցների, հանրային կազմակերպությունների հետ:

Հանրության ներգրավումը քննարկումներին՝ նախագծի մշակման սկզբնական փուլում, առաջացած խնդիրների ժամանակին լրացումը և փոխադարձ հակամարտության կանխումը /վերացումը/ արագացնում է նախագծի իրագործումը, միաժամանակ խուսափելով դրա վերակազմակերպման լրացուցիչ ծախսերից:

Որոշումների կայացման գործընթացում ՀՄ արդյունավետության համար անհրաժեշտ է՝

- հանրությանը ներգրավել նախագծի նախապատրաստման ամենասկզբում.
- հանրությանը մասնակից դարձնել քննարկումներին՝ նախագծի բոլոր փուլերում՝ մշակումից մինչև իրականացում.
- հանրությանը լիարժեք տեղեկատվություն տրամադրել նախագծի մասին /ինչպես էկոլոգիական, այնպես էլ զուտ տեխնոլոգիական, տնտեսական.../.
- ուշադիր վերլուծել արտահայտած կարծիքները, որոնք անպայման հաշվի առնել որոշում կայացնելիս.
- ճգտել երկխոսության՝ որոշում կայացնող անձանց և հանրության միջև:

ԱՊՀ մյուս երկրների փորձը ցույց է տալիս, թե որքան լավ է հանրույթը տեղեկատվացած շրջակա միջավայրի վրա տվյալ գործունեության ազդեցության մասին, այնքան արդյունավետորեն է օժանդակում ճիշտ որոշման կայացմանը:

Զարգացած երկրներում ժողովրդի նորմալ կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեցող գործերը վճռվում են հանրությանը նախօրոր տեղեկացնելով առաջարկվող նախագծերի բոլոր դրական ու բացասական կողմերի մասին, բազմաթիվ փորձագիտական, տեղեկատվական աշխատանքներից և քննարկումներից հետո միայն որոշում այլ կամ ոչ: Հենց դրանով էլ պայմանավորվում է բազմաթիվ սոցիալ-տնտեսական ծրագրերի բարեհաջող իրագործումը:

Ծահառու խմբեր

Հայաստանում էկոլոգիական նշանակություն ունեցող որոշումների կայացման գործընթացում առկա են հարաբերություններ հետևյալ կողմերի միջև.

ա) **նախաձեռնող** - գործարար, նախագծող, նաև՝ պետական կառույց, որը գործունեության որևէ տեսակ կամ որևէ նախաձեռնություն արտոնելու համար դիմում է պետական կառավարման մարմիններին,

բ) **պետական կառույցներ** /պաշտոնյաներ/, որոնք որոշում են կայացնում այս կամ այն գործունեությունն արտոնելու համար,

գ) **ազդակիր համայնքներ՝** նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությանը ենթակա շրջակա միջավայրի բնակչություն:

Այս կողմերի միջև իրավական, տնտեսական, կազմակերպական հարաբերությունները կարգավորվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: